«Ծիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2024-2025
Մայրենի (7-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն...

Մուշեղ Իշխան

1.**Միրելի՛ բարեկամ, ուշադի՛ր կարդա տեքստը. հեղինակը Լեոնարդո դա Վինչին է:**

Զառամյալ երկու հոպոպներ՝ վարուժան ու մարի, մի օր զգացին, որ արդեն չեն կարող բնից թռչել, հեռանալ: Տկար աչքերով երկուսն էլ տեսնում էին լոկ ծխավուն պղտորություն:

Բայց մեկ էլ եկան ջահել հոպոպները, հավաքվեցին հայրական բնում և գործի անցան: Ոմանք անհապաղ սկսեցին նոր, ավելի տաք կացարան հյուսել, ուրիշները թռան որդ ու բզեզ որսալու, մնացածները թևեցին անտառի կողմը՝ կուրությունը բուժող խոտ որոնելու: Շուտով ձագերը ծնողներին հոգատարությամբ փոխադրեցին նոր բնակարան:

Բոլոր ուստրերն ու դուստրերը ձեռնամուխ եղան հրաշագործ դեղաբույսի հյութով հիվանդներին դարմանելու գործին: Հոպոպները համբերատար կերպով փոխարինում էին մեկմեկու՝ ոչ մի րոպե մենակ չթողնելով ծնողներին:

2. **Քո կարծիքով այս նախադասություններից ո՞րը կարող է դառնալ տեքստի ավարտը: Օղակի մեջ վերցրո՛ւ ընտրածդ նախադասության համարը /1 միավոր/:**

ա) Որդիական երախտիքը և սերը դարմանեցին ծնողներին:

բ) Որդիական երախայրիքը և սերը դարմանեցին ծնողներին:

գ) Որդիական երախտագիտությունը և սերը դարմանեցին ծնողներին:

3. **Տրված բառակապակցությունները տեքստի մի քանի բառերի բացատրությունն են: Ընտրի՛ր տեքստից տվյալ բացատրությանը համապատասխանող բառը, գրի՛ր դրա կողքին: Մնացած բառակապակցություններին համապատասխան բառերն էլ դու ինքդ գտի՛ր և գրի՛ր /4 միավոր/ :**

Էգ ձի, էգ թռչուն, արու ձի, արու թռչուն, էգ ոչխար, արու ոչխար, արու զավակ, արու այծ:

Էգ ձի – զամբիկ

Էգ թռչուն-մարի

Արու ձի-հովատակ

Արու թռչուն-վարուժան

Էգ ոչխար-մաքի

Արու ոչխար-խոյ

Արու զավակ-ուստր

Արու այծ - նոխազ, քաղ, քոշ, ների

Ուշադրություն ստուգող ուսուցչին: Եթե արու այծի համար նշյալ բառերից մեկը գրել է, ապա պետք է համապատասխան միավորը տալ աշակերտին:

4. ***Դարմանել, զառամյալ*** **բառերի երկուական հոմանիշ և երկուական հականիշ բառե՛րը գտիր և գրի՛ր /2 միավոր/:**

Դարմանել-բուժել, ապաքինել, բժշկել, կազդուրել / հիվանդացնել, ախտահարել

Զառամյալ – ծեր, ծերունի, զառամ, ալևոր/ երիտասարդ, ջահել, պատանի, պարմանի

5. **Տեքստում կան *արմատ + ա + արմատ* բանաձևին համապատասխանող բառեր, դո՛ւրս գրիր, վերլուծի՛ր բառակազմորեն /3 միավոր/:**

Ձեռնամուխ – ձեռն+ա+մուխ

Հրաշագործ – հրաշ+ա+գործ

Դեղաբույս-դեղ+ա+բույս

6. ***Ջահել, պղտոր*** բառերը ուղիղ և փոխաբերական իմաստներով գործածի՛ր բառակապակցությունների մեջ /2 միավոր/:

Ուղիղ իմաստ- ջահել տղա, աղջիկ, կին

Պղտոր ջուր, գետ, առու, անձրևաջուր

Փոխաբերական իմաստ- ջահել այգի, ծառ, գարուն, ծաղիկ, սիրտ, սեր

պղտոր միտք, աչքեր, հայացք, արարք, սիրտ, օր

7. **Տեքստի երկրորդ նախադասությունից դո՛ւրս գրիր դիմավոր բայը, դարձրո՛ւ հրամայական եղանակի ժամանակաձևեր (եզակի և հոգնակի, դրական և ժխտական՝ արգելական հրամայական ձևեր) /2 միավոր/:**

Տեսնում էին - տե՛ս, տեսե՛ք, մի՛ տես /մի՛ տեսնիր, մի՛ տեսեք/ մի՛ տեսնեք

Ուշադրություն ստուգող ուսուցչին: ***Մի՛ տեսնիր, մի՛ տեսնեք*** ձևերը գրելը պարտադիր չէ: Բայց եթե միայն սրանք է գրել, պետք է ճիշտ լուծում համարել:

Եթե շեշտերը ոչ մի բառաձևի վրա չի դրել, պետք է հանել մեկ միավոր, իսկ եթե երեք բառաձևի վրա դրել է, բայց մի տեղ վրիպել, պետք է միավորը լրիվ տալ: Եթե երկու անգամ չի դրել, պիտի հանել կես միավոր:

8. **Ըստ տեքստի՝ հորինի՛ր զավակ հոպոպների երկխոսությունը միմյանց հետ /6 միավոր/:**

Գնահատման սանդղակ

Միավոր	Նկարագրություն
6	1. Հանդես է բերել ստեղծագործական մոտեցում և երևակայություն: 2. Գերազանցորեն և հետևողականորեն պահպանել է երկխոսության գրության ձևը և համապատասխան կետադրությունը:

	3. Պահպանել է հարցի և պատասխանի տրամաբանական հաջորդականությունը: 4. Խոսքը պատկերավոր է, անմիջական, նախադասությունները տրամաբանորեն կապակցված են: 5. Կիրառել է հարուստ բառապաշար: 6. Ուղղագրական, կետադրական, քերականական սխալներ, վրիպակներ չկան:
5-4	1. Մասամբ դրսևորել է ստեղծագործական մոտեցում և երևակայություն: 2. Լավ պահպանել է երկխոսության գրության ձևը և համապատասխան կետադրությունը: 3. Պահպանել է հարցի և պատասխանի տրամաբանական հաջորդականությունը: 4. Խոսքը պատկերավոր է, անմիջական, բայց որոշ տեղերում նախադասությունները տրամաբանորեն կապակցված չեն: 5. Կիրառել է հարուստ բառապաշար: 6. Ուղղագրական, կետադրական, քերականական 2-3 սխալներ և վրիպակներ կան:
3-2	1. Ստեղծագործական մոտեցում և երևակայություն չի դրսևորել: 2. Հիմնականում պահպանել է երկխոսության գրության ձևը. մասամբ է ճիշտ կետադրել: 3. Չի պահպանել հարցի և պատասխանի տրամաբանական հաջորդականությունը: 4. Խոսքը պատկերավոր չէ, նախադասությունները տրամաբանորեն կապակցված չեն: 5. Բառապաշարն աղքատիկ է: 6. Ուղղագրական, կետադրական, քերականական 5-6 սխալներ, վրիպակներ կան:
1	1. Ստեղծագործական մոտեցում և երևակայություն չի դրսևորել: 2. Չի պահպանել հարցազրույցի գրության ձևը և համապատասխան կետադրությունը: 3. Չի պահպանել հարցի և պատասխանի տրամաբանական հաջորդականությունը: 4. Խոսքը պատկերավոր չէ, նախադասությունները տրամաբանորեն կապակցված չեն: 5. Բառապաշարն աղքատիկ է: 6. Ուղղագրական, կետադրական, քերականական 7-8 սխալներ, վրիպակներ կան:
0	Հարցազրույց չի գրել: